This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.

+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.

+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.

+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

THE UNIVERSITY OF MICHIGAN · LIBRARIES ·

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Բ. Հ. Կ. Մ.

Հրատարակչական մասնաճիւղի № 6

Ժողովրդական գրքերի շար № 3

ՄԱՆՐ ՎԱՐԿԻ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ըստ 1904 թ. յունիսի 7-ի օրէնքի

ինչպէս են լինում եւ ինչպէս պէտք է հիմնել:

Թարգմանութիւն ռուսերէնից

ԲԱԳՈՒ

Տպարան Բագուայ Հայոց Հրատ. ընկ.

1908

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

GRAD

ՄԱՆՐ ՎԱՐԿԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ըստ 1904 թ. յունիսի 7-ի օրէնքի

ԹԷ ԻՆՉՊԷ՛Ս ԵՆ ԼԻՆՈՒՄ ԵՒ ԻՆՉՊԷ՛Ս ՊԷՏՔ Է ՀԻՄՆԵԼ

«Տզրուկները և վաշխառուները, որոնք միևնոյն ժամանակ իրենց ձեռքն են հաւաքում գիւղում եղած ամբողջ հացը և գնում են նոյնպէս գիւղական արհեստի բոլոր արդիւնքները, քայքայում են մեր գիւղերը!» — շարունակ աղաղակում ենք մենք։

Բանւորը պատրաստում է որևէ իր, միջնորդ-վաճառականը էժան գնով ձեռք է բերում այդ և յետոյ ծախում է այդ իրը աւելի թանգ գնով նրան, ում որ նա հարկաւոր է։ Եւ դուրս է գալիս, որ բանւորին մնում է մի չնչին աշխատավարձ, որը հազիւ է ապահովում նրա սընունդը, մինչդեռ ամբողջ շահը, ամբողջ օգուտը այդ պատրաստած իրից մնում է միջնորդ-

վաճառականի ձեռքին, որին մենք արհամարհանքով անուանում ենք «չարչի»։

Բայց լինում է և աւելի վատ. որևէ իր պատրաստելու համար անհրաժեշտ է նախ ունենալ նիւթ. ապա, մինչև որ իրը կը պատրաստուի և կը վաճառուի, բանուորին հարկաւոր է ուտել-խմել։ Եւ ահա դարձեալ գալիս է ծառայութեան պատրաստ միջնորդ-վաճառականը— սակայն ոչ միայն իբրև միջնորդ՝ պատրաստողի և գնողի միջև, այլ և իբրև իսկական տզրուկ, իբրև «արիւն ծծող»։ Նիւթ՝ իրը պատրաստելու համար՝ նա կը տայ, բայց վատ նիւթ. իսկ նիւթի գինը կը նշանակէ երեք անգամ աւելի թանգ և, բացի այդ, վաղօրօք կը պայմանաւորուէ այն գնի մասին, որով հիւսնը, կօշկակարը, դարբինը պարտաւոր են ծախել նրան իրենց արդիւնքները. այդ գինը, ինքընըստինքեան հասկանալի է. նշանակւում է, ընդհակառակը, երկու անգամ պակաս իսկական գնից։ Նոյն այդ միջնորդ-վաճառականը բաց է թողնում իր խանութից, որքան կամենաք, և ալիւր, և աղ, և թէյ շաքարի հետ, և բոլորը, ինչ անհրաժեշտ է տնային տնտեսութեան մէջ, և ի հարկէ

պարտքով, յիշեալ ապագայ ապրանքի հաշւին. միայն այդ բոլորի համար նա նշանակելու է գըները «խղճմտանքով». և վերջապէս, երբ գործը վերջացած՝ պէտք է հաշիւ տեսնել, քանից դուրս է գալիս, որ վատ նիւթից պատրաստւել են, իհարկէ և վատ արդիւնքներ. և այստեղ նա այդ այդ տզրուկը սկսում է նեղել բանւորին—ջոկել վատը լաւից և իջեցնել գները։ Եւ դուրս է գալիս, որ աշխատաւորը ոչինչ չէ աշխատել, իսկ միջնորդը օգտւել է և՛ նիւթի մէջ, և՛ պարտքով տւած ապրանքների մէջ, և՛ գնած արդէն պատրաստի իրերի մէջ։

Նոյնը տեղի ունի և հողագործութեան մէջ։ Որպէսզի ապրէ մինչև նոր բերքը, գիւղացին փող է վերցնում՝ պարտաւորւելով տալ, իր ապագայ, գարնանային և ամառային, աշխատանքը նրան. ով տալիս է այդ փողը. այդպիսով նա ստանում է, ի հարկէ, անհամեմատ աւելի քիչ, քան կը ստանար այն դէպքում, եթէ վարձւէր այդ աշխատանքները կատարելու համար ոչ թէ վաղօրօք, այլ ժամանակին, այսինքն գարնանը և ամառը։ Եթէ ապագայ աշխատանքի ապահովութեամբ ոչ-ոք նրան ոչինչ չի տալիս,

երևի չի հրաժարուի օգնել նրան փողով կամ ապրանքով հարևան խանութպանը, կամ գինետան տէրը, իսկ եթէ ոչ, հէնց ինքը—հարուստ հարևանը։ Բայց դարձեալ ապրանքի գինը կը նշանակուի մէկ ու կէս կամ երկու անգամ աւելի, իսկ պարտք տուած փողի փոխարէն հարևանը կը վերցնէ հող, կամ, աւելի ճիշտն ասած, հողի բերքը, հաշուած հողի այս կամ այն տարածութիւնից։ Այսպէս թէ այնպէս. պարտք վերցրած մի րուբլու համար գիւղացին ստիպուած է լինում վճարել մէկ և կէս, իսկ յաճախ և երկու րուբլի։

Սակայն, գիւղացին և արհեստաւորը միջոց ունեն չը տալ պարտք վերցրած փողի վրայ եղած այդ յաւելումի նշանաւոր մասը։ Հարկաւոր է միայն յիշել, որ ընկած քարի տակով ջուրը չի հոսում, որ ինքն իրեն ոչինչ չէ կատարւում, չի ընկնում մեր ձեռքը, որ հարկաւոր է վճռել և սեփական ոյժերով գործի կանգնել։ Դա դեռ քիչ է։ Դա այնպիսի մի գործ է, որ ամեն մէկն իր ոյժերով եւ ամենքն առանձին-առանձին ոչինչ չեն կարող անել։ Անհրաժեշտ է, որ այն մարդիկ, որոնք իրենց

գործի շրջանառութեան համար կարիք ունին պարտքի մէջ, կամ—ինչպէս արտայայտում են օտարազգիները և գիտնականները—կարիք ունեն կրեդիտի *մէջ, պայմանաւորւեն և* գործեն միասին, *փոխադարձ համաձայնութեամբ։*

Մանր վարկի հաստատութիւնները, այսինքըն այնպիսի կասսաներ և մանր բանկեր, որոնք նշանակւած են հէնց նրա համար, որպէսզի փոքրիկ պարտքեր հայթհայթել աշխատաւոր ժողովրդին, վաղուց է որ զանազան անուների տակ գոյութիւն ունեն մեզ մօտ։ Կան գիւղական և շրջանային (մհալ) բանկեր, կան նախկին պետական գիւղացիների փոխարկու կասսաներ, կան խնայողական ընկերութիւններ վարկային հիմնարկութիւններ և այլն։

Դեռ 1895 թւականին հրատարակւել է մի ընդհանուր օրէնք, մանր վարկի հաստատութիւնների համար, որը ֆինանսների մինիստրին (նախարարին) իրաւունք էր տալիս հաստատել այդ տեսակ հիմնարկութիւնների կանոնադրութիւնը, իսկ Պետական Բանկին—իրաւունք՝ բաժանել վարկային ընկերութիւններ հիմնելու համար յատուկ երկարամեայ պարտ-

քեր։ Դրանից աւելի առաջ, 1871 թ., Պետական Բանկին իրաւունք էր տրւած, ըստ օրէնքի, պարտք տալ վարկային-խնայողական ընկերութիւններին, որպէսզի սրանք ևս, իրենց հերթին, կարողանան բաժանել պարտքեր իրենց անդամներին։

Ըստ 1894 թւականի նոր կանոնադրութեան, Պետական Բանկը կարող է պարտք տալ, չը միայն վարկային-խնայողական հիմնարկութիւններին, այլ և մանր վարկի բոլոր հիմնարկութիւններին, ինչպիսին էլ որ լինեն նրանք։ Վերջապէս, 1904 թ. նորից հրատարակւել է մի ընդհանուր օրէնք մանր վարկի հիմնարկութիւնների մասին, փոխանակ 1895 թ. օրէնքի, թէպէտ այդ նոր օրէնքը քիչ բան է փոխել հինի մէջ։

Կանոններ, այդպիսով, հրատարակւել են վաղուց և շատ անգամ, բայց այնուամենայնիւ մանր վարկի հիմնարկութիւնները մեզ մօտ այնքան էլ լաւ դրութեան մէջ չեն եղել, յամենայն դէպս ոչ այնպէս, ինչպէս այդ ցանկալի և հարկաւոր էր։ Սակայն, եթէ կամենալ աւելի ուշադիր կերպով նայել խնդրին, պէտք է խոստովանել, որ այդ հանգամանքի գլխաւոր

պատճառը նրա մէջ է, որ մենք չենք կամենում մատ մատի խփել։ Մենք շարունակ սպասում և ցանկանում ենք, որ աներևոյթ մէկը բոլորը պատրաստի առաջարկէ մեզ։ Քանի՜ցս անգամ ես ինքս տեսել եմ, որ մարդիկ դիմում են Պետական Բանկին, իսկ երբեմն և ուղղակի փինանսների նախարարին՝ խնդրելով պարտք տալ 100, 200՝ երբեմն և 50—70 րուբլի։

Բայց ինչպէս կարող է Պետական Բանկը այդ անել։ Քանի-քանի՜ այդպիսի պարտատէրներ հանդէս կը գան, եթէ միայն սկսեն այդպիսի գումարներով փող բաժանել։ Ո՞ւր, ի՞նչ, ճանապարհով, մի քանի հարիւր կամ հազար վերստի վրայ իմանալ—ո՞վ է այդ պարտատէրը։ Ազնի՞ւ է նա, թէ ո՞չ, կարելի՞ է նրան հաւատալ թէ՞ ոչ։ Իսկ յետոյ, երբ անհրաժեշտ կը լինի պարտքերը հետ ստանալ, ի՜նչ սուր աչքեր և երկար բազուկներ են հարկաւոր, որպէս զի ճարել և ձեռք գցել կարողանան այդ պարտատիրոջը!

Պետական Բանկը շատ անգամ իրապէս փորձել է տալ այդ տեսակ տուրքեր և ամէն անգամ նորից համոզւում է որ այդ նրա համար միանգամայն անկարելի բան է։ Սկրզ-

քում, ինչպէս, կը գան գործունեայ, լաւ, ազնիւ մարդիկ, կը վերցնեն փող գործի համար և ժամանակին էլ կը վերադարձնեն։ Բայց միայն նրանց եռևից, հետևելով նրանց օրինակին, գալիս է ամեն ոք և բերում է իր հետ, ըստ ընդունուած կարգի, ամեն տեսակ «վկայաթղթեր» իր բարեյուսութեան մասին թէ գիւղական և թէ այլ իշխանութիւնից. բայց դառն փորձը ցոյց է տուել, որ ոչ մի վկայաթուղթ չի օգնում։ Ո՞վ գիտէ, ինչպէս են ըստացւում այդ թղթերը։ Իսկ իրականութեան մէջ, չը նայած բոլոր այդ վկայաթղթերին, ընկըսւում են ուշացումներ, մաս-մասն վճարումներ, պարտքերի յետաձգումն, — և պարտատէրերը շատ շուտով հասկանում են, որ Բանկը հեռու է, որ նրա բազուկները կարճ են և որ նա, ինչպէս ոչինչ չի կարող անել իրենց հետ!

Ահա այդպէս, առանձին-առանձին որևէ տեղ փող խնդրել, — մենք այդ կարող ենք։ Բայց աշխատել մտածել, թէ ինչպէս անել ընդհանուր ոյժերով, որպէս զի ամեն մէկը մեզնից — և՛ ես, և՛ ուրիշը, և՛ երրորդը — կարողանայ պարտքով

փող ճարել, և ոչ միայն այսօր, այլ և վաղը, և առաջիկայ տարին, և ընդհանրապէս, ամեն անամ կարիքի դէպքում, մենք այդ անում ենք մեծ դժուարութեամբ։ Բոլորն էլ մտածում են. ինչո՞ւ այդ ես պէտք է «աշխատեմ ուրիշների համար» մի այնպիսի գործի մէջ, որի յարմարութիւնները և օգուտները ստանալու եմ ոչ միայն ես, այլ և իմ հարևանը։

Սակայն այդ գործից ոչինչ դուրս չի գալ, եթէ չլինի փոխադարձ համաձայնութիւն, եթէ մենք իրար չը պաշտպանենք։ Մենք միայն ճանաչում ենք փոխադարձաբար իրար։ Մեր մասին մենք շատ լաւ գիտենք, ով ինչպէս է, ում կարելի է հաւատալ, ում ոչ. ով փողը գործի մէջ կդնէ, որ դատարկ տեղից փողը քաղաք չվերցնէ. իսկ եթէ փողը հարկաւոր է որևէ մէկին իր անյետաձգելի կարիքի համար, մենք շատ գեղեցիկ կերպով գիտենք, ով այդ կարիքից, մեր բարի աջակցութեամբ, կարող է դուրս գալ, իսկ ում, միևնոյն է, պարտքի միջոցով չես կարող օգնել կարիքից դուրս գալու, միայն ուրիշի փողերը կմսխես։

Այդպէս ուրեմն, պարտք տալ և առնել խե-

ջամբռ կերպով, բացի տղրուկ-միջնորդից և ա-մեն-մի ուրիշ «բարեգործից», կարող ենք մի-այն մենք, մեր ընդհանուր համաձայնութեամբ, և այնպէս, որ ինքներս մեր գործերի, մեր կար-գադրութիւնների և իրար համար մարդկանց ա-ռաջ պատասխանատու լինենք։

Մանր վարկի հաստատութիւնների մասին շատ անգամ խօսուել և գրուել է, բայց ի՞նչ. կար-դում, լսում և մոռանում են, իսկ երբ անհրա-ժեշտ է լինում, դարձեալ գնում են իրենց հին «բարեգործի»—տղրուկ-վաշխառուի մօտ։ Գան-գատուել ի հարկէ գանգատւում են այդ «բարե-գործի» վրայ, հայհոյում են նրան, որովհետև նա նեղում, խաբում և չարչարում է, բայց ա-նել որևէ քայլ, որպէսզի բաժանուել նրանից, հաշիւները վերջացնել,—այդ ոչ ոք չի անում։ Հետևապէս չի խանգարում մի անգամ ևս յիշեց-նել, ի՛նչ եւ ի՛նչպէս կարելի է անել, ինչպէս գործին կպչել, որպէս զի գիւղում աւելի հեշտ և էժան կերպով պարտքով փող ճարել։

Վերևում արդէն ասուած էր, որ զանազան տեսակի մանր վարկի հաստատութիւններ մեզ մօտ վաղուց արդէն գոյութիւն ունին, և այն էլ

բաւականին շատ թւով։ Միայն գիւղացիական, գիւղական և շրջանային բանկերը և համանման ուրիշ հիմնարկութիւնները, որոնք հաստատւում են գիւղական հասարակութիւնների և շրջանի բոլոր գիւղերի կողմից, հաշւում են մօտ 5000։ Վարկային-խնայողական ընկերութիւնների, այսինքն այնպիսի ընկերութիւնների, որոնք հիմնւում են ցանկացողների կողմից, այսպէս ասած, հաւաքողի փողով,—հասնում է 900-ի։ Բայց, յայտնի է, որ նրանց ահագին մեծամասնութեան գործերը վարւում են վատ. եղած փողերը վաղուց արդէն բաժանւած են (իսկ այդ փողերը քիչ չեն, մօտ 80 միլլիոն րուբլի) առանձին անհատների մէջ, և այդ բաժանւած փողերի մեծ մասը կարծես կպել է այն ձեռքից, ուր ընկել է. մի քանի պարտքեր, ժամանակն անցնելու պատճառով, բոլորովին կորել են, իսկ ուրիշները, յամենայն դէպս, շատ դժւար է ձեռք բերել, որպէսզի փողերը նորից շրջանառութեան մէջ դնել, նորից պարտք տալ նրանց, որ կարիք ունի այժմ նրանց նրանց մէջ։

Ինչպէս և ինչու է այդպէս պատահել—ժամանակը չէ քննելու. Գուցէ մենք առիթ կունե-

նանք յետագայում խօսել այդ մասին։ Թէև հէնց այստեղ չի կարելի չաւելացնել, որ այդ վարկային հաստատութիւնների անաջողութեան մէջ մենք ինքներս ամենից առաջ և ամենից շատ մեղաւոր ենք, մենք, որ հիմնել ենք այդ հաստատութիւնները, հաշուել ուրիշների փողը մերն և դադարել վճարելուց։

Բայց ինչքան որ վատ էլ վերջացրած լինեն առաջուան հիմնարկութիւնները, այժմ, ըստ օրէնքի, ներմուծուած են նոր կարգեր և սկսել են գոյանալ նոր հիմնարկութիւններ։ Նրանց մասին մենք կխօսենք այժմ։ Գուցէ մենք նախկին վարկային հիմնարկութիւնների անաջողութիւնից որևէ բան արդէն սովորել ենք. Հների հետ մի կերպ կվերջացնենք մեր հաշիւները, բայց նորերը կվարենք խելացի և փորձուած կերպով։

Որ այդ նոր հաստատութիւնները, որոնք հիմնւում են նոր ձևերով, հանաքի բան չեն, որ մեզնից ամեն մէկը պէտք է մտածէ նրանց մասին և փորձէ օգտուել նրանցից, դա երևում է հէնց մէկ նրանից, որ նորաբաց վարկային ընկերութիւնների թիւը, որոնք գործում են

Ռուսաստանի զանազան անկիւններում, համանում է 1396-ի։ Նախանցեալ տարուայ վերջին;— նրանց թիւը հազիւ էր հասնում 1,100-ի, բայց այն ժամանակ արդէն նրանց մասնակից-ընկերների թիւը հասնում էր 438 հազար մարդու։ Պետական Բանկից բոլոր այդ ընկերութիւններին տրուած է մօտ 4½ միլիօն րուբլի, իսկ բացի այդ նրանք հաւաքել են բաժիններ և պարտքեր մասնաւոր անձնաւորութիւններից 8 միլիօն րուբլու։ Իրենց կարճատև գոյութեան ընթացքում նրանք կուտակել են սեպհական միջոցներ, գլխաւորապէս, իրենց շահից, ոչ պակաս քան 1. 996 հազար րուբլի, և բոլոր այդ աղբիւրներից տուել են մինչև նախանցեալ տարուայ հոկտեմբերի 1-ը պարտքեր մօտաւորապէս գրեթէ 12 միլիօն րուբլու։ 1907 թ. օգոստոս ամսին բոլոր վարկային հաստատութիւնների ընդհանուր գումարը, հաւանօրէն պիտի եղած լինի ոչ պակաս քան 16 միլիօն րուբլի։

Հին, նախկին հաստատութիւններին պարտատէրերը պարտական են (ինչպէս ասած էր մերը) 80 միլիօն րուբլի, մինչդեռ նոր վարկա-

յին (կրեդիտային) ընկերութիւններին՝ ընկերները պարտական են միայն $8^1/_2$ միլիօն րուբլի։ Բայց տարբերութիւնը նրանց մէջ այն է, որ հին ընկերութիւններում բաժանուած փողերը դարձել են մասամբ մեռած դրամագլուխ, դարձել են հնացած պարտքեր, որոնցից հէնց պարտատէրերին ոչ մի օգուտ չը կայ, որոնց վրայ նրանք միայն % %-եր են վճարում, իբրև տուրք, և չը գիտեն, ինչպէս ազատուել նրանցից. իսկ նոր վարկային հիմնարկութիւններում —պարտատէրը վերցրած պարտքը առայժմ շըրջանառութեան մէջ է պահում. փողերը նա ծախսում է, յետոյ յետ ստանում իր տնտեսութիւնից և վերադարձնում ընկերութեանը, որը նորից տալիս է այդ գումարը, նոր շրջանառութեան համար, մի ուրիշ ընկերոջ, կամ թէ հէնց միևնոյն մարդին, նայած կարիքին։

Ես միանգամայն դիտմամբ ասացի, որ պարտատէրերը նոր ընկերութիւններում «առայժմ» շրջանառութեան մէջ են դնում վերցրած պարտագումարը։ Բայց եթէ մենք և նոր ընկերութիւնների մէջ վարուելու լինենք նոյնպէս անփոյթ կերպով, յաճախ նոյնիսկ ան-

բարեխիղճ կերպով, ինչպէս այդ հին ընկերութիւններում, այն ժամանակ զարմանալի չի լինի, որ նորերի հետ ևս կը պատահէ նոյնը, ինչ որ և նախկինների հետ, որ նորերն ևս կը դադարեն մեզ ծառայելուց, կը դադարեն մեզ օգուտ բերել և կը դառնան մեզ համար նոյնպիսի մի ծանրութիւն, մի բեռ։ Այդ ամենը կախուած է մեզանից և միմիայն մեզանից, և այդ դէպքում աւելորդ է որոնել մեզաւորին կամ օրէնքի մէջ, կամ իշխանութեան մէջ, կամ մի այլ տեղ. գործը գտնւում է մեր սեփական ձեռքերում—ինչպէս կամենանք, այնպէս էլ կը վարենք. կը ցանկանք, կը վարենք ի վնաս մեզ և ի կորուստ մեր ապագայ սերունդների։

Վարկային հաստատութիւնները, որ մենք ինքներս, կրեդիտի (վարկի) մէջ կարիքաւորներս, մեզ համար հիմնել կարող ենք *(ըստ 1904 թ. նոր օրէնքի), կարող են լինել երկու տեսակի.* հասարակական *և* ընկերական։

Մանր վարկի հասարակական *հաստատութիւններն անւանւում են* փոխատու-խնայողական կասսաներ *և հիմնւում են գիւղական կամ մի քանի*

գիւղերի հասարակութիւնների ձեռքով, համաձայն հասարակական որոշման։

Ընկերական հաստատութիւնները, *իրենց հերթին, լինում են երկու տեսակի.* փոխատու-խնայողական *և* վարկային ընկերութիւններ։

Այդպիսով, մանր վարկի նոր հիմնարկութիւնները լինում են երեք տեսակի 1) գիւղական եւ շրջանային հասարակական փոխատու-խնայողական կասսաներ, *2)* փոխատու խնայողական ընկերութիւններ, *և 3)* վարկային ընկերութիւններ։

Այդ երեք տեսակներից ամեն մէկի համար հաստատուած է առանձին կանոնադրութիւն և բոլոր երեք կանոնադրութիւններն էլ հրատարակուած են Կառավարող Սենատի անունից «կառավարութեան օրէնքների և կարգադրութիւնների Հաւաքածուի» մէջ։ Այդ կանոնադրութիւնները կարող է ստանալ ամեն մէկը ազատ կերպով, Պետական Բանկի որևէ բաժնում, կամ թէ մանր վարկի տեսչից, որը գտնւում է Պետ. Բանկի ամեն մի բաժանմունքում։ Որպէսզի ստանալ այդ փոստով, բաւական է ուղարկել բաժանմունքում գտնւ

տեսչին 2 կոպէկ փոստի դրոշմերով (մարկա), ամեն մի հատ կանոնագրութեան համար։

Ինչպէս ասած, մանր կրեդիտի բոլոր հիմնարկութիւնները անում են միևնոյնը և միևնոյն նպատակով. տալիս են պարտք։ Այդ նպատակով, նրանք ընդունում են խնայողութեան համար գումարներ և ընդհանրապէս իրենք պարտք են վերցնում, ուր կարող են, փող և մատուցանում են իրենց մասնակիցներին ամեն տեսակ ծառայութիւններ՝ գնելու և ծախելու նրանց անհրաժեշտ իրերը, և դրա համար նրանք բոլորն էլ ունեն միևնոյն կանոնները։ Տարբերութիւնը նրանց մէջ կայանում է նրանում, ի՛նչպէս են նրանք կառավարւում և ինչպէս, ի՛նչ հիմքերի վրայ, հաստատութեան մասնակիցները պատասխանատու են նրա գործերի համար։ Որպէսզի ընտրել, ի՞նչ հաստատութիւն բանալ՝ վարկային ընկերութի՞ւն, փոխատու-խնայողական ընկերութիւն կամ հասարակական (գիւղական կամ շրջանային) փոխատու-խնայողական կասսա, հարկաւոր է ծանօթանալ մօտ գործի այդ կողմի հետ։ Եւ դրանով էլ մենք կը զբաղւենք այժմ։

Հասարական կասսան, *ինչպէս այդ խօսքը ցոյց է տալիս, հասարակական գործ է։ Նա կառավարւում է մօտաւորապէս այնպէս, ինչպէս վարւում են ընդհանրապէս բոլոր համայնային, հասարակական գործերը։ Եթէ կասսան բացւում է գիւղում, նրա տէրը գիւղի հասարակութիւնն է, համայնքը, գիւղական ժողովուրդը. եթէ նա բացւում է շրջանի (մի քանի գիւղերի) համար, նրա տէրն է շրջանային ժողովը, որը, ինչպէս յայտնի է, բաղկացած է ընտրւած մարդկանցից։*

Կարող են, ի հարկէ, և մի քանի գիւղական համայնքներ, որոնք պատկանում են տարբեր շրջանների, կամ 2—3 շրջաններ անգամ համաձայնւել, որպէսզի միասին բանալ մի կասսա։ Այն ժամանակ կասսան կառավարւում է բոլոր համայնքների միացած ժողովով, որը կարող է փոխարինւել ընտրեալների ժողովով, լիազօրների, որոնց թիւն տատանւում է 30-ի և 100-ի մէջ։ Այդ փոխարինումն արւում է կամ գիւղացիների անձնական ցանկութեամբ, կամ, եթէ մասնակիցների թիւը 300-ից անց է, պարտաւորեցուցիչ կերպով։

Ինչպէս ասուած էր, կասսայի տէրն է համայնքը և նրա ժողովը. ժողովը տալիս է գլխաւոր ցուցմունքները—ինչ կարգով և ինչ անել. քանի՞ տոկոս վերցնել տուող պարտքերից և քանի °|₀ վճարել մտցնուող գումարներից և իրա կասսայի պարտքերից. վերցնե՞լ արդեօք դրսից փող, կամ թէ շրջան առնե՞լ սեփական համայնական դրամագլխով, որը դրուած է կասսայի հիմքում. պահանջե՞լ արդեօք պարտատէրերից գրաւ կամ որևէ մէկի պատասխանատւութիւնը և ինչ դէպքերում կամ թէ ո՛չ, և նման ուրիշ խնդիրներ: Բայց, իսկապէս, կասսան կառավարում է վարչութիւնից, որին ընտրել է գիւղական կամ շրջանային ժողովը (СХОДЪ): Այդ վարչութիւնը որոնում է. ո՛ւմ կարելի է պարտք տալ և ո՛րքան, և ո՛ւմ—մերժել, ինչպէս և ինչքան գնահատել գրաւը. ընդունե՞լ սրա կամ նրա պատասխանատու պարտատիրոջ համար կամ, ընդհակառակը, նրա պատասխանատուութիւնը անարժան համարել. վարչութիւնն աշխատում է կասսայի համար փող գտնել, կատարելով, երբ հարկաւոր է, համայնական ժողովի բոլոր կարգադրութիւնները: Եթէ որևէ

շրջանառութեան համար հարկաւոր է սահմանել առանձին կանոններ (օրինակ, որևէ ապրանք գնելու կամ ծախելու դէպքում), վարչութիւնը կազմում է այդ կանոնները և ներկայացնում համայնական ժողովի հաստատութեանը։

Վարչութեան գործողութիւնները քննելու համար, նոյնպէս և հաշիւների, փողերի և այլ կայքի վերստուգման համար, ընտրւում են հաշւաքննիչներ, իսկ եթէ կասսայի շրջանառութիւնը մեծանում է և աւելի բարդանում, ընտրւում է համայնական ժողովի կողմից առանձին խորհուրդ։

Վարչութեան մէջ պիտի լինեն երեք հոգի։ Բայց համայնական կամ շրջանային ժողովը կարող է ընտրել և աւելի, ամեն մի գիւղից հէնց մի մարդ։ Բայց պէտք է ի նկատի ունենալ, որ վարչութիւնը, երբ նրա մէջ չափազանց շատ մարդ է լինում, դառնում է դանդաղկոտ. դժւար է լինում յաճախ հաւաքւել, մինչդեռ անհրաժեշտ է, որ վարչութիւնը լինի ներկայ, տեղն ու տեղը, փող ընդունելու և տալու համար, ըստ կարելոյն, աւելի յաճախ (ոչ պակաս քան շաբաթական մի անգամ)։ Ու-

տի, Թերևս, աւելի յարմար կը լինի վարչութիւնը կազմել երեք անդամից, բայց փոխարէնը ունենալ մի խորհուրդ, որը բաղկացած կը լինի 5 կամ 10 անդամից (մէկ կամ երկու ընտրեալ ամեն մի համայնքից) որովհետև խորհրդի համար բաւական է հաւաքուել ամսական մի անգամ։ Այդ խորհուրդին կարելի է յանձնարարել, ի միջի այլոց, սահմանել այն չափը, որից աւելի չի կարելի տալ պարտք կասսայի ամեն մի մասնակից անդամին։ Այն ժամանակ այդ սահմաններում, վարչութիւնն ինքը պէտք է պարտքով փող բաժանէ, ըստ կարևորութեան, նայած նրան, ինչի համար է մարդը վերցնում, ինչ ժամանակամիջոցով, ով է նրա համար պատասխանատու և նոյնպէս ի նկատի առնելով, որքան ազատ փող կայ դրամարկղում։ Խորհրդի վրայ է ծանրացած և պարտականութիւնը՝ շարունակ վերահսկել վարչութեան գործունէութիւնը, և իրագործել զանազան խնդիրներ, որ կարող է յանձնել նրան համայնական-շրջանային ժողովը։

Յետոյ, ամենագլխաւորը, այդ այն է, որ հասարակութիւնը, որը հիմնում է կասսան,

պատասխանատու է նրա համար։ Ինքն ըստինքեան հասկանալի է, որ եթէ համայնքը բացում է կասսան իր սեփական համայնական դրամագըլխով և ոչ մի տեղից ու ոչ ոքից դրամ չէ վերցընում և չի էլ կամենում վերցնել իր շրջանառութեան համար, այն ժամանակ նրա վրայ այլ ոչ մի պատասխանատուութիւն էլ չի ընկնում։ Եթէ այդ տեսակ համայնական կասսայի վարչութիւնը բաժանել է ամբողջ դրամագլուխը աւելորդ տեղից և նա կորզելու է,—դրանով էլ գործը վերջանում է. համայնքը կորցնում է միայն իր համայնական դրամագլուխը։ Բայց եթէ կասսան կարգադրում է այն փողերը, որոնք մտել են խնայողութեան նպատակով, կամ որևէ մէկը՝ մասնաւոր անձն կամ Պետական Բանկը, փոխառել է կասսային, այդ դէպքում հասարակութիւնը (համայնքը) պատասխանատու է նրանց համար պարտատուների և փողը խնայողութեան համար տուած անձանց առաջ։ Եւ պատասխանում են ի հարկէ, ինչպէս ամէն մի հասարակական գործի մէջ, ամէնքը, այսինքն, նրանք, օգտուել են կասսայից վերցրած պարտքով և նըրանք, որոնք չեն վերցրել, — հասարակական կասսայի համար հաւասարապէս պատասխանա-

տու են գիւղական համայնքի կամ շրջանային հասարակութեան բոլոր անդամները, բոլորի փոխադարձ պատասխանատւութեամբ ամեն մէկ անդամի համար։

Ընկերութիւնը կազմւում է միայն այն անձնաւորութիւններից, որոնք իրենք ցանկութիւն են յայտնում մասնակցել նրա մէջ։

Գործի միակ տէրն այդ դէպքում ներկայանում է ընկերների ընդհանուր ժողովը, որը տալիս է ընդհանուր ցուցմունքներ կամ սահմանում է, երբ այդ՝ անհրաժեշտ է, մանրամասն կանոններ. Իսկ կառավարում է գործը վարչութիւնը, ընտրւած ընդհանուր ժողովի կողմից։ Բացի այդ, անպայման կերպով ընտրւում է մի խորհուրդ, որը վերահսկում է վարչութիւնը, նայում է նրա հաշիւները և կատարում մի շարք այլ պարտականութիւններ, որոնք կարող են տրւել նրա վրայ ընդհանուր ժողովի կողմից։ Խորհուրդն ընդունում է նոր ընկերներ, նշանակում է նրանց կրեդիտ, այսինքն որոշում է այն սահմանները, մինչև որն կարելի է տալ ամեն մէկին պարտք և այլն։

Ընկերութեան մէջ մտնող ամեն ոք յօժա-

բականօրէն պարտականութիւն է վերցնում իր վրայ, բոլոր միւս ընկերների փոխադարձ պարտականութեամբ, ինքն էլ պատասխանատու լինելու ընկերութեան գործերի և պարտաւորութիւնների համար, սակայն այդ պատասխանատուութիւնը հաւասար չէ, այլ համապատասխան է կրեդիտին. ով աւելի մեծ կրեդիտ ունի, այսինքն ով աւելի շատ կարելիութիւն ունի օգտուել ընկերութեան գումարներից, նա և պատասխանում է աւելի, իսկ ով աւելի փոքր կրեդիտ ունի, նա, համապատասխան կերպով, աւելի փոքր գումարով է պատասխանատու։

Տարբերութիւնը վարկային և փոխատու-խնայողական ընկերութիւնների մէջ այժմ կայանում է հետևեալի մէջ։ Վարկային (կրեդիտային) ընկերութիւնը պարտաւոր է հէնց սկզբբից՝ իր բացման օրից, ունենալ պատրաստի հիմնական դրամագլուխ։ Այդ դրամագլուխը կարող է կազմուած լինել նուիրատուութիւնից, կարող է նուիրուած լինել որևէ մէկի կողմից, ինչ, ի հարկէ, աւելի սակաւ է լինում։ Բայց այդ դրամագլուխը կարող է և պարտք վերցրած լինել։ Պարտք տալ կարող են այդ դէպքում գիւղական

և շրջանային (ВОЛОСТНОЕ) հասարակությունները
և պետական բանկը։ Փոխատու-խնայողական
ընկերություններում հիմնական դրամագլուխը
կազմվում է մասնակից-ընկերների բաժիններից
(փայերից)։ Երբ բաժինը բոլորի համար հաւա-
սար է և նրա չափն որոշւում է իր՝ ընկե-
րութեան կողմից. սկզբում, ի հարկէ ընկերու-
թեան կազմւելու ժամանակ, — հիմնադիրներ
ների կողմից, իսկ յետագայում բաժինը կարող
է փոխուել ընդհանուր ժողովի կողմից։ Բայց
բաժինը մուծւում է ոչ թէ միանգամայն, այլ
մաս-մաս, այնպիսի չափերով, ինչպիսին նշանա-
կում է դարձեալ ինքը ընկերութիւնը։ Սակայն,
յամենայն դէպս, բաժիններ կազմելու համար
անհրաժեշտ վճարումները փոխատու-խնայողա-
կան ընկերութեան մէջ պարտաւորական են։

Փոխատու-խնայողական ընկերութիւնները
գոյութիւն ունեն մեզ մօտ վաղուց ի վեր. Նը-
րանցից շատերը ծաղկում են, ունեն մեծ շըր-
ջանառութիւն և երևան են գալիս այժմ իսկ
վերին աստիճանի օգտակար ազգաբնակութեան
համար, որի մէջ գործում են. բայց այդ ընկե-
րութիւնների մեծամասնութեան գործերը վատ

ձեն գնում. Նրանցից շատ-շատերը քայքայւել են և ոչինչ չեն բերել իրենց հիմնադիրներին, բացի վնասից։ Եւ այդ տեսակ ընկերութիւնների դէմ այնտեղ, ուր նրանք վատ կերպով են վերջացրել իրենց գոյութիւնը, կազմւել է վատ կարծիք. Սակայն, փոխատու-խնայողական ընկերութիւնների անաջողութեան պատճառը ոչ թէ բաժինների մէջ է, որոնք սիրւած չեն, այլ նրա մէջ, որ մարդիկ, յաճախ շատ լաւ մարդիկ, որոնք ձեռնարկել են այդ գործին, չեն կարողացել ինչպէս յարկն է կառավարել այն։ Այդ ընկերութիւնների վրայ ոչ մի վերահսկութիւն չի եղել, չի եղել ո՛չ ոք, որ կարողանար ժամանակին վերջ տալ ընկերների կողմից կատարւող անիրաւութիւններին պարտքեր բաժանելու գործում, ով համարձակութիւն և շնորք ունենար ստիպել պարտատէրերին լինել պարտաճանաչ։ Ժամանակի ընթացքում պարտքերը դարձել են անյուսալի, իսկ խեղճ բաժնետէրերը կորցրել են կամ բոլոր իրենց բաժինները, կամ նրանց մի նշանաւոր մասը։ Եթէ բաժինները (փայերը) և բաժնետէրական փոխատու-խնայողական ընկերութիւնները մեզ մօտ սիրւած չեն, դրա մեղքը փայերի մէջ չէ, այլ,

1) որ նրանք կազմում են եղել ըս[illegible]ական նոնադրութեան և 2) որ ընկերութիւնից [illegible] նալիք պարտքերի քանակը որւում է եղել փայի մեծութեան համեմատ, եթէ փայըդ մեծ է, կարող ես և մեծ փոխարկութիւն կատարել, իսկ եթէ փոքր է, և փոխարկութիւնը կոպէկանոց է։ Դրանից բղխել է այն, որ երբ մարդ մտնում է ընկերութեան մէջ, նա պէտք է միանգամից խոշոր փայ մտցնէ. և որովհետև նոր ընկերը, դա ինքըստինքեան հասկանալի է, փող չի ունենում, նա ստիպւած է լինում անել հետևեալը. գրքերի մէջ նրա վրայ գրում են որոշ փայ, որը նա իսկի չի էլ մտցրել, և հանում են եղել այդ փայը առաջին պարտքից, որը տալիս են եղել նրան։ Գրում են, օրինակի համար, 100 րուբլի պարտք, բայց նրանից յետ են պահում 50 րուբլի փայի համար, իսկ % վերցնում են բոլոր հարիւր րուբլուց։ Ուրեմն մարդու ձեռքին քին են դնում միայն 40 րուբլի։ Հասկանալի բան է, որ այն 100 րուբլի պարտքը, որը նշանակւած է մուրհակի վրայ, պարտատէրը երբէք չի կարողանում վճարել, ահա այստեղ սկսւում

են գնումութիւնները և պարտքի արտադրումն մի և ոչ ժամանակամիջոցից միւս ժամանակամիջոց։

Ըստ նոր կանոնադրութեան, այդ տեսակ ոչինչ չի կարող և չը պէտք է լինի։ Նշանակւում է ընկերութեան մէջ, ասենք, 10 կամ 25 րուբլիանոց փայ, իսկ փայի վճարների ժամանակամիջոցները մի-մի րուբլի տարեկան կամ 10-ական կոպէկ ամիսը։ Բայց չէ որ ամսական 10 կոպէկ կարող է յետաձգել նոյնիսկ ամեն մի աղքատ։ Հետևապէս, այդ տեսակը փայը ոչոքին չէ կարող նեղացնել, ոչ ոքի՝ ընկերութեան անդամ գրուելիս՝ աւելորդ պարտքերի մէջ չի գցիլ և կ՚շահագոգռէ մարդուս անել գէթ փոքրիկ խնայողութիւններ։ Բայց միևնոյն ժամանակ այդ փայերը, կամ աւելի ճիշդ, ժամանակին որոշ փայամասեր մտցնելը, որքան էլ փոքր լինեն նրանք, բայց մտնելով շատ թւով մարդկանցից, չափազանց ամրացնում են ընկերութեան գործը, որովհետև ընկերութիւնը արագ կերպով հաւաքում է իր սեփական հիմնական դրամագլուխը։ Սակայն, փայամասերից բաւականաչափ կապիտալ կարող է կազմուել միայն ժամանակի ընթացքում։ Այդ պատճա-

ռով և փոխատու-վարկային ընկերու[illegible]ական կարող սկսել գործը, առանց այն, որ ա[illegible] կողմնակի կերպով որոշ գումար հիմնական դրամագլխի համար—այդ կարող է լինել պարգև, կամ նուիրատուութիւն, կամ փոխառութիւն, ճիշտ այնպէս, ինչպէս և վարկային ընկերութեան մէջ։ Այդ տեսակ փոխառութիւնը կարելի է, ի միջի այլոց, անել «Մանր կրեդիտի գործերի վարչութեան» կամ Պետական Բանկի մօտ։

Վերջ ի վերջոյ, և վարկային ընկերութեան, և փոխատու-խնայողական ընկերութեան բացման համար անկարելի է խուսափել, հիմնական դրամագլուխ կազմելու համար, դիմել Պետական Բանկին և՛ մի և՛ միւս ընկերութիւնը կառավարւում են միակերպ. իրաւունքներ ունեն նրանք նմանապէս միևնոյնը. իսկ տարբերութիւնը նրա մէջ է, որ վարկային ընկերութիւը չէ պահանջում պարտաւորական փայատոմսեր մտցնելը, իսկ փոխատու-խնայողական ընկերութեան մէջ —ընկերները ըստ կանոնադրութեան պարտաւոր են մտցնել որոշ ժամանակամիջոցների ընթացքում պարտաւորական վճարներ, մինչև որ Ն’կազմւի ամէն մէկի համար որոշ փայ։ Երբ

ճն գնու... լրանում, նրա տուած շահը աւելացնում և ո...այի վրայ, իսկ երբ փայը մրիւ է, շահը ուր-...ւում է փայատիրոջ ձեռքը։

Այժմ թող իրենք հիմնադիրները մտածեն, թէ ինչ տեսակի ընկերութիւն է ձեռնտու հիմնել, ձեռնտո՞ւ է, որ ամեն մի ընկեր պարտաւոր լինի գեթ մի փոքր դրամ գանձէ իր համար և նեղացուցի՞չ են արդեօք նրա համար փոքրիկ, բայց պարտադիր վճարները. թէ խնայողութիւնների կուտակումը հարկաւոր է թողնել ամեն մէկի ազատ կամքին։ Առաջին դէպքում թող կազմեն փոխատու-խնայողական ընկերութիւն, երկրորդ դէպքում—վարկային։

Չի խանգարում ի նկատի ունենալ և հետեւեալ հանգամանքը։ Այն ծայրայեղ դէպքում, երբ ընկերութիւնը կրէ որոշ վնաս, որն անհրաժեշտ է բաժանել ընկերների միջև, այդ դէպքում վարկային ընկերութեան մէջ ամեն մի ընկեր ստիպուած պիտի լինի վճարել իր գրպանից որոշ գումար. իսկ փոխատու-ընկերութեան մէջ—վնասն ամենից առաջ հանւում է փայից, այնպէս որ, թէպէտ և ամեն ընկեր վճարելու է

միասը, բայց նա այդ չի հանելու իր սեփական գրպանից։

Վերևում, խօսելովվարկային և փոխատու-խնայողական ընկերութիւնների առանձնայատկութիւնների մասին, ես երկար կանգ եմ առել հիմնական դրամագլխի վրայ, որն նրանք պիտի ունենան, և այն բանի վրայ, թէ ինչպէս է կազմւում այդ դրամագլուխը։ Անհրաժեշտ է յիշատակել, որ և հասարակական փոխատու-խնայողական կասսա հիմնելու համար պահանջւում է անպատճառ որոշ սկզբնական դրամագլուխ։ Այդ դրամագլխից կասսան պէտք է սկսէ անել փոխառութիւններ, նա և պէտք է ծառայէ որպէս ապահովութիւն կասսայի ապագայ շրջանառութիւնների համար։

Համայնքը կարող է այդ դրամագլուխը վերցընել իր սեփական համայնական միջոցներից. բայց այդ դէպքում այդ դրամագլուխը ոչ մի դէպքում չի կարելի վերցնել կասսայից ուրիշ պէտքերի համար։ Կամ թէ հիմնական դրամագլուխը կարող է պարտք վերցնւել մասնաւոր անձից, կամ «կրեդիտային գործերի վարչութիւնից», նոյն հիմքերի վրայ, ինչպէս և ընկերական վարկային հիմնարկութիւններում։ Կարե-

լի է, վերջապէս, և համայնական հասարակական փողերը տալ կասսային հիմնական դրամագլուխ կազմելու համար ոչ ամբողջապէս, այլ միայն որպէս պարտք, որոշ պայմաններով և որոշ, շատ թէ քիչ տևողական ժամանակով։

Վերը մենք բացատրեցինք, ինչումն է կայանում հասարակական կասսայի, վարկային ընկերութեան և փոխատու-խնայողական ընկերութեան գործի էութիւնը։ Պէտք է յիշատակել և մի հանգամանքի մասին, որով հասարակական կասսաները տարբերւում են ընկերութիւններից. այդ այն է, որ հասարակական կասսայում կարող են փոխառութեամբ կամ ուրիշ այլ ծառայութեամբ օգտւել միայն համայնքի բոլոր անդամները, բայց միայն գիւղական և շրջանային հասարակութեան անդամները, այսինքն գիւղացիք. մինչդեռ գիւղում ապրող բոլոր դրսեցիները, թէև այնտեղ մշտապէս էլ հաստատւած լինեն, քաղաքացիները, քաղաքներում գրւած արհեստաւորները, հոգևոր կոչման անձինք, մանր կալւածատէրերը և նմանները իրաւունք չունեն դիմել կասսային։ Ընկերութեան մէջ, նրա ծառայութեամբ կարող է օգտւել ամեն մի ընկեր

և միայն ընկերները, սակայն ընկերութեան անդամ կարող է դառնալ ամէն մի բարեյոյս մարդ, միայն թէ նա ունենայ իր մշտական կայութեան տեղը և իր որոշ տնտեսութիւնն այնտեղ, որտեղ գործում է ընկերութիւնը։

Այնուհետ, հարկաւոր է անցնել նրան, թէ ինչպէս դիմել գործին, որպէսզի բանալ մանր կրեդիտի որևէ հիմնարկութիւն։

Ամենակարևորն արդէն ասած է։ Չ'ընկնելով մանրամասնութիւնների մէջ, ես, այնուամենայնիւ օգտաւէտ եմ համարում ասել մի քանի խօսք երկու ամենակարևոր խնդիրների մասին. թէ ինչպէս մանր կրեդիտի հաստատութիւնները պէտք է տան փոխառութիւններ և ինչպէս ու որտեղից նրանք պէտք է միջոցներ ճարեն այդ նպատակով։

Բոլոր վարկային հիմնարկութիւնների գլխաւոր կոչումն է, այդ ինքնըստինքեան հասկանալի է, տալ իրենց մասնակիցներին կարելիութիւն պարտքեր ձեռք բերել։

Սակայն, փոխառութիւնները տրւում են միայն տնտեսական շրջանառութեան նպատակով և բացի այդ, բոլոր կանոնադրութիւններն էլ

պահանջում են, որ պարտք վերցնողը վաղօրոք յայտնէ, թէ ինչ նպատակի համար է նա վերցնում պարտքը։

Փոխառութիւնը կարող է միայն այն ժամանակ օգտակար լինել, երբ նա ծախսւում է այնպիսի առարկայի համար, որ պարտատիրոջ օգուտ է բերում, աւելացնում է նրա ունեցածը։ Եթէ մարդ պարտքը վերցնում է ապրելու համար, եթէ նա կամենում է ծախսել վերցրած պարտքը իր կարիքների համար, իր ընտանիքի համար, թէպէտև ամենաանհրաժեշտ կարիքի համար, այդ դէպքում պարտքը նրան չի օգնի, այլ, ըստ դէպքերի մեծամասնութեան, կծառայէ նրա վնասին, որովհետև, ծախսելով վերցրած գումարը, նա աւելի հարուստ չի լինի, իսկ փոխառութիւնը վերադարձնել անհրաժեշտ կլինի ոչ թէ շահից, օգուտից, այլ ուղղակի վերջին ունեցած-չունեցածից. այդ տեսակ փոխառութիւնը դառնում է ոչ թէ լաւ գործ, բարիութիւն վերցնողի համար, այլ իսկական սնանկութիւն։

Դրա համար, եթէ պարտք վերցնողից պահանջւում է, որ նա ինքն իրեն հաշիւ տայ

ասէ ընկերութեան կամ կասսայի վարչութեանը, ինչի՞ համար է նա վերցնում պարտքը, ո՞րտեղից է նա մտադիր վերադարձնել այն, դա աւելորդ ճնշումն չէ պարտապանի համար։ Դա մի միջոց է, որը կարող է արգելել որևէ մէկին ծախսել աւելորդ տեղից հեշտութեամբ ձեռք բերուած փողերը, առանց մտածելու նրա մասին, ինչպէս պէտք է վերադարձնել նրանց։

Փոխառութիւնները արւում են սովորական տնտեսական շրջանառութեան համար և այնքան ժամանակով, որքան այդ անհրաժեշտ է որոշ շրջանառութեան համար։

Եթէ, օրինակի համար, յուլիսին կամ օգոստոսին փող է վերցնւում, որպէսզի յետ գնել կալւածատիրոջից կամ կապալառուից հանդում դարսած հացը, այդ դէպքում բաւական է վերցընել փողը մինչև նոյեմբեր-դեկտեմբեր, որպէսզի, չը շտապելով, ծախել այդ հացի մի մասը և վերադարձնել փողերը։ Լինում են և այնպիսի դէպքեր (այդ գլխաւորապէս քաղաքներում), որ պարտք վերցնողը վերցնում է փողը միանգամից, բայց վերադարձնում է փոքր առ փոքր, շաբաթից շաբաթ։ Միայն թէ պարտ-

քերի ծայրագոյն միջոցը նշանակուած է օրէնքով մի տարի։ Աւելի քան մի տարուայ ժամանակով չի կարելի պարտք տալ սովորական տնտեսական շրջանառութեան համար։

Սակայն, փոխառութիւնները կարող են տրուել նաև աւելի երկար ժամանակամիջոցով, առանձին պէտքերի համար. օրինակ՝ գիւղատնտեսութեան համար անհրաժեշտ տաւար գնելու դէպքում, կամ գիւղատնտեսական ու արհեստաւորի գործիքներ ձեռք բերելու ժամանակ—երեք տարուայ ընթացքում վերադարձնելու պայմանով։ Իսկ գիւղատնտեսական բարելաւումներ մտցնելու դէպքում կամ արհեստի մէջ նորմուծութիւններ անելու համար փոխառութիւն կարելի է կատարել և 5 տարուայ ժամանակով։ Այդ դէպքում փոխառութիւնը պէտք է վերադարձուի մի քանի ժամանակամիջոցներում, հաւասարապէս, կամ թէ մի այլ դասաւորութեամբ, որովհետև մի տարուայ ընթացքում բոլոր արուած ծախքերը, թէև անպայման կերպով աւելացնում են պարտապանի եկամուտը, բայց չեն կարող վերադարձուած լինել միանգամից։

Անցնենք հետևեալ խնդրին։ Ի՞նչ միջոցներից կարող են տրուել փոխառութիւնները։ Դրա համար ամենից առաջ ծառայում է, ի հարկէ, հիմնական դրամագլուխը։ Ես արդէն ասել եմ, որ այդ դրամագլուխը կարող է լինել սեփական կամ փոխ առուած և որ մանր կրեդիտի ամեն մի հաստատութիւն կարող է ստանալ այդ դրամագլուխը «Մանր կրեդիտի գործերի վարչութիւնից»։

Այդ վարչութիւնը տալիս է այդ տեսակ փոխառութիւններ 1000-ից մինչև 2000 ռուբլի ամեն մի կրեդիտային հաստատութեան, այն պայմանով, որ առաջին տարիների ընթացքում վերադարձնուեն միայն տոկոսները, իսկ յետոյ և տրուած պարտքը մաս-մաս, այնպէս որ 13 տարուայ ընթացքում ամբողջ պարտքը յետ է դարձնւում։ Պարտքը վերադարձնելու հետ հաւասարապէս, կրեդիտային հիմնարկութիւնը իր շահի մի մասն յետաձգում է որպէս հիմնական դրամագլուխ, այնպէս որ 13 տարուայ ընթացքում նա պիտի ձեռք բերած լինի իր սեփական դրամագլուխը ոչ պակաս, քան նա սկզբում վերցրել է Վարչութիւնից։

Հիմնական դրամագլուխը, բացի այն, որ ծառայում է փոխառութիւններ կատարելու համար, ունի և այն նշանակութիւնը, որ ապահովում է իրենով յետագայ պարտքերը և մտցընւող գումարների ամբողջութիւնը։ Այդ ապահովութիւնը կայանում է նրա մէջ, որ նշանաւոր փաստերի դէպքում, եթէ կասսան կամ ընկերութիւնը դադարեցնելու լինեն իրենց գոյութիւնը,—այն ամենից, ինչ կարելի է յետ ըստանալ թէ պարտապաններից, թէ ընկերներից և թէ գիւղական հասարակութիւնից, այդ ամենից վճարւում են առաջին հերթին ամեն տեսակի պարտքերը և ընկերութեան արած փոխառութիւնները։ Իսկ հիմնական դրամագլուխը ծածկելու համար, թէկուզ նա լինի և փոխ առած, գնում է միայն այն, ինչ մնում է։ Այնպէս որ, եթէ, վերջ ի վերջոյ, գիւղական հասարակութիւնից կամ ընկերութիւնից հաւաքած բոլոր փողերը չը բաւականացան բոլոր պարտատէրերին և խնայողութիւններ մտցրած բոլոր անձանց բաւարարութեան համար, ամենից առաջ պիտի կորչի հիմնական դրամագլուխը,

իսկ եթէ նա փոխ է առնուած, պիտի վճարուի նա, ով փոխ է տուել։

Հիմնական դրամագլուխը կարելի է պարտք վերցնել և ուրիշ տեղ, բացի անուանեալ վարչութիւնից։ Վախը՝ կորցնելու հիմնական դրամագլուխը, այնքան էլ մեծ չպիտի լինի, որովհետև վարկային հաստատութիւնը, նոյնիսկ ամենավատ դէպքում, այնքան էլ հեշտ կերպով չէ սնանկանում։ Այդ պատճառով մինչև անգամ մասնաւոր անձինք չեն խուսափում պարտք տալ հիմնական դրամագլուխը՝ ընկերութիւն կամ հասարակական կասսա բանալու համար։ Նմանապէս և գիւղական հասարակութիւնը, եթէ չէ կամենում հիմնել սեփական հասարակական կասսա, կարող է օգնել ընկերութեան ըստեղծմանը իր սեփական գիւղում կամ շրջանում, տալով նրան պարտք հիմնական դրամագլխի համար։ Եւ իսկապէս—ինչո՞ւ չ՛օգնել ընկերութեանը համայնական դրամագլխով։ Դրամագլուխը մինչև մի քանի տարին կը վերադարձնուի, իսկ մինչդեռ փողերը կը գտնուին ընկերութեան ձեռքին, նա կը վճարէ նրանց տոկոսները։ Իսկ համայնքի առանձին անդամների

համար տարբերութիւնը, իսկապէս, այնքան էլ մեծ չէ—լինի գիւղում հասարակական կասսա թէ ընկերութիւն։ Ընկերութեան անդամ կը լինի, ի հարկէ, ոչ ամեն ոք։ Վատ տանտիրոջը, ծոյլ, անբարեխիղճ, արբեցող գիւղացուն—ոչ ոք ընկերութեան մէջ չի ընդունի։ Բայց չէ՞ որ և հասարակական կասսայից ամեն մէկին փող չեն տայ, այլ միայն այնպիսի մարդու, որին, միևնոյն է, և ընկերութեան մէջ կը վերցնէին, եթէ այդպիսինը լինէր։ Եւ ընկերութեան մէջ, և հասարակական կասսայի մէջ լաւ մարդուն չեն հրաժարուի փող տալ, եթէ միայն փող կայ։ Ուրեմն, ոյժը նրա մէջ չէ, թէ գիւղում բացուած է հասարակական կասսա կամ ընկերութիւն, այլ նրա մէջ, ունի արդեօ՞ք բացուած վարկային հաստատութիւնը դրամ։ Իսկ դրամ կարող է ունենալ ամեն մի վարկային հաստատութիւն, հասարակական կամ ընկերական, եթէ միայն նա կատարում է փոխառութիւններ ոչ թէ դադարկ տեղից, առանց կշռելու, այլ խելքը գլխին ընտրութեամբ, և ոչ թէ ապրելու համար, այլ որևէ գործ կատարելու համար։ Ինքըն ըստինքեան հասկանալի է, որ միայն հիմ-

նական դրամագլխով իր շրջանառութեան համար կարող է գործ տեսնել այն հասարակական կաս-տան, ուր գիւղական հասարակութիւնն ունի շատ մեծ համայնական դրամագլուխ. բայց դա լինում է սակաւ: Դէպքերի ահագին մեծամասնութեան մէջ, ընկերութիւնը կամ կասսան ստիպւած են, փոխատուութիւններ տալու համար, պարտքով փող վերցնել: Այդ փողը նրանք ձեռք են բերում, առաջարկելով տեղական բնակիչներին տալ իրենց խնայողութիւնները, կամ վերցնելով մուրհակով հարուստ մարդկանցից, կամ Պետական Բանկից, և նոյնիսկ մասնաւոր բանկերից: Եւ միայն դրա մէջ, այսինքն փող գտնելու կարելիութեան մէջ է կայանում վարկային հաստատութեան ամբողջ միտքն ու նպատակը: —

Եթէ մեզնից ամեն մէկը կարողանար ազատ կերպով, երբ որ հարկաւոր է էժան տոկոսներով փող ձեռք բերել, այն ժամանակ և ընկերութիւնները և կասսաները միանգամայն աւելորդ կը լինէին: Խնդիրը նրա մէջն է, որ մէկ մարդուն շատ շատերը չեն գտնուի որ հաւատան, դրսի մարդը նրան սկի էլ չի ճանաչում. իսկ տեղական ունեւոր մարդը յաճախ կը

ցանկանայ օգտուել իր դրութիւնից և նեղել, այսինքն կը նշանակէ այնպիսի պայմաններ, որ ձեռնտու են իրեն և ծանր պարտք անողի համար։ Ուստի, բոլոր նրանց, ով կարիք ունի փողի իր տնտեսական շրջանառութեան համար, մնում է միանալ, որպէսզի փող որոնել եւ ճարել միասին, այսինքն ընդհանուր պատասխանատուութեամբ, իսկ յետոյ կարգադրել այդ փողով, տալով դրանից այդ հասարակութեան անդամներին պարտք, ինչքան դա անհրաժեշտ է։

Վարկային հաստատութեան ամբողջ ոյժը գտնւում է այդ պատասխանատուութեան մէջ։ Մէկ մարդուն չեն հաւատայ, իսկ մի-քանիսին որոնք միացել են իրար հետ, կը տան։ Ի՛նչ մէկը անկարող է անել, այդ կանեն միացած մի քանիսը։ Այդ կողմից հասարակութիւնը և ընկերութիւնը բոլորովին նման են միմիանց.

Բոլորովին աւելորդ տեղից են պնդում, որ գիւղում խնայողութիւններ չեն մտցնւի հիմնւելիք ընկերութեան կասսան, որ մարդիկ այնտեղ կամ թաքցնում են փողերը, կամ թողնում նրանց այնպիսի շրջանառութեան մէջ, որը մեծ օգուտներ է բերում, և ոչ թէ 5; 6 կամ նոյն-

իսկ 8% է տալիս, ինչպէս այդ ընկերութիւնները։ Որ գիւղում գոյութիւն ունեն ազատ փողեր, այդ երևում է գոյութիւն ունեցող վարկային հաստատութիւններով, նրանք աշխատել են մինչև այժմ կարճ ժամանակ և ունեն մօտ 6 միլիօն րուբլի մասնաւոր խնայողութիւններ։ Նոյնպէս և Պետական Խնայողական կասսաները, փոստային բաժանմունքներին կից, հաւաքում են շատ խոշոր գումարներ և գլխաւորապէս—գիւղական ազգաբնակութեան մէջ։ Եթէ նոյնիսկ այդ գումարների կէսը ընկերութիւնները կամ հասարակական կասսաները կարողանային տեղափոխել իրենց մօտ, այն ժամանակ նրանք կունենային բաւականաչափ փող։ Բայց խնդիրը նրա մէջն է, որ առայժմ ընկերութիւններին քիչ են հաւատում և պէտք է ամենից շատ աշխատել, որ հէնց տեղերում նրանք վայելեն հաւատ։ Եթէ որևէ մէկը, ձեռնարկելով վարկային հաստատութիւն, յոյսը դնում է գանձարանի կամ Պետական Բանկի վրայ, նա շատ և շատ սխալւում է։ Ի հարկէ, գանձարանը կամ Բանկը սկզբում կօգնեն, կը տան և հիմնական դրամագլուխ, կը տան, հաւանօրէն, և շրջանառու-

թեան միջոցներ, ի հարկէ բոլորը փոխատութեամբ։ Բայց չէ որ այդ սկզբի, փորձի համար է։ Իսկ եթէ այդ տեսակ հիմնարկութեանը նոյնիսկ տեղական բնակիչները վատ են հաւատում և նոյնիսկ փոքրիկ գումարներ էլ չեն տալիս, ինչպէս կարո՞ղ են Բանկը կամ պետական գանձարանը հաւատալ։ Չէ՞ որ գանձարանը և Բանկը նրանցից հեռու են. նրանք չեն տեսնում, ինչ է կատարւում այդ տեսակ հիմնարկութեան մէջ. իսկ տեղական մարդիկ շատ լաւ տեսնում և իմանում են, թէ ո՞ւմ, ինչ նպատակի համար փողեր են տրւում։ Եթէ փողերը ընկնում են անվստահելի ձեռքեր, առանց մանրազննին քըննութեան, իսկ յաճախ և խնամիութեան պատճառով գործերի ղեկավարների հետ, կամ, ինչ աւելի վատ է, магарич-ի պատճառով, նոյն ժամանակ, ի հարկէ, ոչ ոք այդ տեսակ հասարակական կասսային մի րուբլի էլ չի տայ, որ նա խնայել է սև օրւան համար։ Իսկ նայելով դրանց, Պետական Բանկը, ինքնըստինքեան հասկանալի է, ընկերութեանը ոչինչ չի տայ նրա շրջանառութեան միջոցների համար։

Գումարներ կարելի է ընդունել ումից

կամենաս, և ոչ միայն ընկերութեան կամ կասսայի մասնակիցներից։ Այդ գումարների ընդունելութեան պայմանները մասամբ վաղօրօք են նշանակւում կանոնադրութեամբ, մասամբ էլ յետոյ՝ ինքը ընկերութիւնը կամ կասսան։ Ի՛նչ ժամանակով են ընդունւում այդ գումարները. ինչքա՛ն տոկոս պէտք է վճարել նրանց վրայ, մինչև որ գումարը կարելի է ընդունել, այդ ամենը կախուած է իրա՝ ընկերութիւնից կամ հասարակութիւնից։ Ինքնըստինքեան հասկանալի է, որ ընկերութեան կամ կասսայի խելամըտութիւնից է կախուած նշանակել այնպիսի պայմաններ, որ փող տւողներին աւելի ձեռնըտու լինի տալ իրենց փողերը այս վարկային հիմնարկութեանը, և ոչ թէ մի այլ, կամ Պետական խնայողական կասսան։

Վարկային հիմնարկութիւնը կարող է պարտք վերցնել նոյնպէս ուր որ կամենայ և այն տեսակ պայմաններով, որ նպատակայարմար կը գտնէ ընկերութեան կամ հասարակական ժողովը։ Պարտք, ինչպէս վերը ասուած էր, տալիս է և Պետական Բանկը։

Ինքնըստինքեան հասկանալի է, որ Բանկը

փող է տալիս միայն այն պայմանով, եթէ ըն-
կերութիւնը կամ կասսան վարեն իրենց գործը
ինչպէս յարկն է, ըստ օրէնքի և կանոնադրու-
թեան։ Իսկ այդ տեսակէտից ամենագլխաւորը—
այն է, որ պարտքերը տրուեն զգուշու-
թեամբ, ինչպէս վերը ասուած է, իսկապէս
տնտեսական շրջանառութեան համար, և որ
տրուած պարտքերը պարտապանների կողմից
իսկապէս ժամանակին վերադարձնուեն։ Եթէ
պարտապանները այդ պայմանը կատարեն, այն
ժամանակ ընկերութիւնը կամ կասսան կարող
կը լինեն, իրենց հերթին, արդարանալ Բանկի
առաջ, որը կը պաշտպանէ նրանց և ապագա-
յում և կը տայ նրանց, ըստ անհրաժեշտու-
թեան, նոր միջոցներ։

Տալով փոխառութիւն ընկերներին և կաս-
սաններին, Պետական Բանկը պարտաւոր է ու-
նենալ նրանց վրայ հսկողութիւն։

Ես արդէն մատնացոյց եմ արել թեթև
կերպով, որ առաջուան մանր կրեդիտի հիմնար-
կութիւնների անաջողութեան պատճառներից
մէկն էլ հէնց այդ հսկողութեան բացակայու-
թիւնն է եղել։ Չի եղել որևէ մէկը, որ կանգը-

նեցնէր ընկերութիւնների անկանոն գործողութիւնները. իսկ մի շարք ուրիշ դէպքերում, երբ վարչութիւնը, ունենալով ամենալաւ ցանկութիւն վարել գործերը ինչպէս յարկն է, չէ կարողացել վարել նրանց, խառնել է հաշիւները, չի իմացել օրէնքները և կանոնները, չի իմացել, ինչը կարելի է և ինչը ոչ,—այդ դէպքերում չի եղել որևէ մէկը, ում նա կարող էր դիմել՝ խնդրելով բացատրութիւն և խորհուրդ՝ և ով պարտաւոր էր օգնել այդ խորհուրդներով նրան։

Նոյնը անպայման կերպով չի կարելի ասել և գիւղացիական մանր կրեդիտի հիմնարկութիւնների մասին։

Այժմ, ընկերական վարկային հաստատութիւնների վերահսկութեան համար, ըստ նոր օրէնքի, գոյութիւն ունեն Պետական Բանկի բաժանմունքներում և գրասենեակներում առանձին վերահսկիչներ, որոնք բացառապէս զբաղուած են մանր կրեդիտի գործերով։ Նրանք գալիս են ստուգելու հաշուապահութիւնը, փողերը և կայքը ընկերութիւնների մէջ. Նրանք պարտաւոր են ոչ միայն տալ ցուցմունքներ, բացատրել դըժ-

ւարին խնդիրները գոյութիւն ունեցող ընկերութիւնների վարչութիւններին, այլ և տալիս են ամեն մէկին, որ հետաքրքրւում է գործով և ձեռնարկում է վարկային ընկերութեան հիմնարկութիւնը, բոլոր անհրաժեշտ տեղեկութիւնները և խորհուրդները, թէ ինչպէս աւելի լաւ կազմակերպել և ուր դիմել։

Փորձը ցոյց է տուել, որ յաճախ նոյնիսկ լաւ վարչութիւնը անկարող է գործը լիովին կառավարել, որովհետև իրենք ընկերներն անգամ խանգարում են տանել գործը ինչպէս հարկաւոր է։ Պարտապանների մէջ, ինչքան էլ խստիւ կերպով նրանց ընտրելու լինես,. միշտ կգտնուին ցանկացողներ ուշացնել, չվճարել իր պարտքը։ Իսկ օրինակը միշտ հրապուրիչ է։ Դրանց յետևից գնում են և աւելի պարտաճանաչները և յենւելով չվճարողների վրայ, նոյնպէս խուսափում են ժամանակին վճարելուց, թէպէտև ունենային կարելիութիւն բարեխիղճ կերպով կատարել իրենց պարտաւորութիւնը․ իսկ հէնց որ վարչութիւնը դառնում է խստապահանջ և այլ միջոցներով ստանում է իր տուածը, իսկոյն սկսւում են գանգատներ խստութեան դէմ,

մարդիկ սկսում են անբաւական լինել իրենց վարչութեամբ, պատրաստ են գլորել նրան և ընտրել այնպիսինը, որ յօժարութեամբ նայէր նրանց անպարտաճանաչութեան և անբարեխըղճութեան վրայ։ Եւ այդ տեսակ դէպքերում չէր գտնւում մէկը, որը ժամանակին պաշտպանէր վարչութիւնը խելօք խօսքով, որը համոզէր ամենահեռատես, տնտեսութեան մէջ գիտուն մարդկանց, որ վարչութիւնը, պնդելով պարտականութիւնների կատարման մէջ, գործում է իրա ընկերութեան օգտին, ընդհանուրի օգտին, որովհետև այլ դէպքում բոլորն էլ շուտ կտան իրենց երեսները ընկերութիւնից. Պետական Բանկը ոչ միայն կդադարէ տալ դրամ, այլ և յետ կպահանջէ այն, ինչ առաջուց տուած է եղել, և ընկերութիւնը, որը օգտակար է եղել երեք-չորս հարիւր աշխատաւորների համար, կպայթէ, կդադարէ իր գոյութիւնը, այն էլ մի տասնեակ յամառ չվճարողների և աղմկողների շնորհիւ։ Չէ որ յայտնի է, որ ամենա-անպարտաճանաչ, ամենավատ պարտապանները երևան են գալիս սովորաբար որպէս ամենամեծ,

[illegible] կամքից։

[illegible] ... էր [illegible]

[illegible] ... ման։

[illegible] Մի անգամ [illegible]

[illegible] ... ընթերի մէջ, [illegible]

[illegible] ... ուղղ կոչ [illegible]

[illegible] թեթևացնել [illegible]

[illegible] երկրորդը, օգնել [illegible]

[illegible] ... ը, և [illegible]

րանց որոշել ամենագլխաւոր խնդիրներից մէկը,
այսինքն ընտրել, թէ օրէնքով թոյլատրուած կրե-
դիտային հիմնարկութիւնների երեք տեսակներից
որն է աւելի նպատակայարմար նրանց համար։

Փոքրիկ գրքոյկի մէջ, ի հարկէ, բոլորը չես
կարող ասել, չես կարող նախատեսնել բոլոր
խնդիրները, որոնք կարող են առաջ գալ այն մար-
դու մէջ, որը հետաքրքրւում է գործով։ Այդ
նպատակով աւելի լաւ կլինի դիմել այն մարդ-
կանց կենդանի խօսքին, որոնք գիտեն գործը և
դրուած են գործին մօտ, այսինքն դիմել մանր
կրեդիտի վերահսկիչներին։ Իսկ եթէ շուտով չը-
յաջողուեց տեսնել և խօսակցել նրա հետ, կա-
րելի է ծանօթանալ գործի հետ գրքոյկներով,
ուր տեղեկութիւնները և բացատրութիւնները
տրուած են աւելի մանրամասն կերպով։ Իսկ այդ
գրքոյկները, ինչպէս վերը ասուած էր, ոչինչ
չարժեն և կարելի է ստանալ փոստով վերահս-
կիչից, որը գտնւում է Պետական Բանկի մօտա-
կայ բաժանմունքին կից։

ամենաշատ աղմկողներ ընդհանրապէս «
ղոփներում

Այդ խնդիրը, այսինքն պաշտպանել ամեն
տւելի խեղամիտներին և հոգատարներին ընդդ
անհոգների և ուրիշի հաշուին ապրել կամեցո
ների, այդ խնդիրը ես պիտի լուծէ վերահսկի
և այն էլ յաճախ յաջողութեամբ, որովհետև Նր
խօսքը ընդհանուր ժողովում՝ կողմնակի մարդու
անաչառ և չը շահագոգուած խորհրդատու
խօսք է։

Մանր կրեդիտի վերահսկիչները պարտաւո
են օգնել իրենց խորհուրդներով և հսկել ոչ մի-
այն ընկերների, այլ և գիւղացիական հասարա-
կական վարկային հիմնարկութիւնների գործու-
նէութեան վրայ, եթէ սրանք օգտուում են փո-
խառութեամբ Պետական Բանկի կողմից։

Ահա ամենը, ինչ ես կամենում էի ասե
այս անգամ մանր կրեդիտի մասին։

Իմ նպատակն է, առաջինը, մի անգամ և
յիշեցնել գիւղում և արհեստաւորների մէջ, թէ
ինչ կարող են նրանք ինքները, որոշ կողմնակի
օգնութեամբ, անել, որպէսզի թեթևացնել փող
պարտք վերցնելու կարիքը, և երկրորդը, օգնել

նրանց որոշել ամենագլխաւոր խնդիրներից մէկը, այսինքն ընտրել, թէ օրէնքով թոյլատրուած կրեդիտային հիմնարկութիւնների երեք տեսակներից ո՞րն է աւելի նպատակայարմար նրանց համար։

Փոքրիկ գրքոյկի մէջ, ի հարկէ, բոլորը չես կարող ասել, չես կարող նախատեսնել բոլոր խնդիրները, որոնք կարող են առաջ գալ այն մարդու մէջ, որը հետաքրքրւում է գործով։ Այդ նպատակով աւելի լաւ կլինի դիմել այն մարդկանց կենդանի խօսքին, որոնք գիտեն գործը և դրուած են գործին մօտ, այսինքն դիմել մանր կրեդիտի վերահսկիչներին։ Իսկ եթէ շուտով չըյաջողուեց տեսնուել և խօսակցել նրա հետ, կարելի է ծանօթանալ գործի հետ գրքոյկներով, ուր տեղեկութիւնները և բացատրութիւնները տրուած են աւելի մանրամասն կերպով։ Իսկ այդ գրքոյկները, ինչպէս վերը ասած էր, ոչինչ չարժեն և կարելի է ստանալ փոստով վերահսկիչից, որը գտնւում է Պետական Բանկի մօտակայ բաժանմունքին կից։